ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան/ Սուսաննա Սահակյանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 24784827 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 5111 հոդված՝ Սիսիան քաղաքի Շիրվանզադե 6 հասցեում գտնվող հանրակացարանային շենքը աճուրդով ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան/ Սուսաննա Սահակյանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում վարչական բյուջեի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

215173 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 4823 հոդված՝ Սիսիան քաղաքի Շիրվանզադե 6 հասցեում գտնվող հանրակացարանային շենքի աճուրդի մասնակցության վճարի համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արմեն Խաչատրյանի 2024 թվականի նոյեմբերի 21-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի եկամուտներն ավելացնել 34341142 (երեսունչորս միլիոն երեք հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, որպես այլ դոտացիաներ՝ տրամադրված պետության կողմից:

1. Վերոնշյալ 34341142 (երեսունչորս միլիոն երեք հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամից 33340915 (երեսուներեք միլիոն երեք հարյուր քառասուն հազար ինը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ ավելացնել 04.2.1 (Գյուղատնտեսություն) ծրագրի 4729 հոդվածին (Այլ նպաստներ բյուջեից) որպես գարնանացանի փոխհատուցում իսկ 1000227 (մեկ միլիոն երկու հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ ավելացնել 04.2.1 (Գյուղատնտեսություն) ծրագրի 4729 հոդվածին (Այլ նպաստներ բյուջեից) որպես գարնանացանի մոնիթորինգի աշխատանքներն իրականացնելու համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցություն և պլանավորվելու է վարչական բյուջեի / ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

21.11.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 34341142 (երեսունչորս միլիոն երեք հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

21.11.2024թ.

Դ. Ավետիսյանին
Ընդունված է
19.11.2024թ.

Սիսիան համայնքի ղեկավար

Պարոն՝ Հ. Առաքելյանին

Սիսիանի համայնքապետարանի
աշխատակազմի առաջատար մասնագետ՝

Սուսաննա Սահակյանից

Զեկուցագիր

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սնանկության դատարանի 2022 թվականի հունիսի 06-ի թիվ ՍՆԴ/0675/04/20 որոշումը և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով՝ «Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովելու համար սնանկության գործով կառավարչի՝ Ա. Ադամյանի կողմից սույն թվականի նոյեմբերի 27-ին ժամը 15:00-ին հայտարարվել է աճուրդ:

Լոտ 3-ով աճուրդի է դրված «Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովելու համար Պարտապանին և/կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան , Շիրվանզադե փողոց 6 հասցեում գտնվող հանրակացարանը: Մեկնարկային գինը՝ 21.517.222 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ է:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի վերոնշյալ հանրակացարանի բնակիչների կարիքները, ինչպես նաև Ձեր հանձնարարականը՝ աճուրդին Սիսիան համայնքի մասնակցության համար անհրաժեշտ է նախատեսել 25.000.000 /քսանհինգ միլիոն/ ՀՀ դրամ:

Աճուրդի մասնակցության վճարը կազմում է 21.517.222 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի 1%-ը:

Աճուրդի նախավճարը կազմում է 21.517.222 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի 5 %-ը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը ֆինանսական բաժնին՝ համապատասխան վճարումներ իրականացնելու նպատակով:

Զեկուցող/_____/Ս. Սահակյան

19.11.2024թ.

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքապետարանի աշխատակազմի
տնտեսագիտության, անձնակազմի կառավարման,
հանրակրթության տեխնոլոգիաների բաժին
Մուտք թիվ 314
19 11